

ԻՐԱՎՈՒՆԿ

Rev. Père G. Kalémkarian Mechitaristengasse
N 4 Vienne

ԻՐԱՎՈՒՆԿ ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՓՇԱԲԹԻ Ե ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլխարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Ոչստանանի համար (երկու քիչը մեկ
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱՎՈՒՆԿԻՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պուլխարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
„И р а в у н к ъ“
ВАРНА (България)
Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Երազմութեան 1899 թ. գրութիւն
ան դրկուիլ եւ յատկաւ դաստիարակ-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովի կամ մասամբ:
Մանուցումն տողը 20 սանթիմ. եւր-
ֆէն աւելի անգամներու համար 20 0/0
զեղը կը լինի:

ՎԱՐՔԱՐԱՆԻ ՄԻ ԹԵՐԻ ԿՈՂՄԵՐԻ

Ինչպէս գիտենք մեր տեղային
վարժարաններու քննութիւնները ա-
ւարտեցան. մենք անոնցմէ շատե-
րուն ներկայ գտնուեցանք. ասոնց
գրեթէ ամենքն ալ գահացուցիչ ը-
լալով հանդերձ, իրենց մէկ երկու
թերի կողմերը ունենալէ չէին դադ-
րեր:

Նախ՝ տարակոյս կա՞յ թէ, երբ
գասի մը աւանդութեան համար
գիւրուսոյց եղանակը թողլով՝ ա-
մենագիտարինին ու էն յոռիին կը
վազենք, թերութիւն մը ըրած
չենք ըլլար, կամ միւր ձեռքը ա-
ւանդ գրուած պատու մը տղան
երկու կտոր բռն սովորեցնելու հա-
մար երբ անցի խելքը կը քամենք,
մահացու մեղք գործած չենք ը-
լար: Այս կարեւորութենէն էր մեր
Աղգ. վարժարանի (*) եւ աղջկանց
կրթարանի մէջ Պուլխարիէն դա-
սերու աւանդութիւնը. աւանդու-
թեան եղանակ մը՝ որ եթէ չիւ
սխալի աշուր աշխարհի երեսէն
վերցած է: Երկու վարժարաննե-
րու մէջ ալ աշակերտներու լեզ-
ուէն անտեղեակ մարդիկ կը դա-
տախտէին. սակայն չմոռնում ը-
սել որ այս վերջիններն ալ իրենց
կարգին սկսած են եղեր հայերէն
սովորի աշակերտին օգտակար ը-
լալու համար կամ երբ հարկը պա-
հանջէ թուրքերէնով կը բացատրեն
եղեր դասը. շիտակը աս երկու-
քին ալ ըսելիք չկայ. . . .

Իրաւ է լեզուի մը ամեն բառե-
րու հոմանիշը գտնել թուրքերէ-
նով անկարելի չէ, սակայն. . . .

Հայեր, ներկա՞յ էիք ձեր զաւ-
կին պուլխարիէնէ քննութեան
լսեցի՞ք աշակերտին տուած պա-

(*) Մակայն երեկ կայ մօզ հա-
ւար միւսքարական կէտ մը, այն
է թէ՝ վերոյիշեալ վարժարաննե-
րու տեսչութիւնը չուզեց ուրանալ
քերտքիւնը. մանաւանդ Աղջկանց
կրթարանինը որ կը խոստովանէր
թէ ստիպուած էր այդպէս ընել
քանի որ մէկ կողմէն պոչկարե-
րէն լեզուն իբր անհրաժեշտ պէտք,
միւս կողմէն արի կը դատախառ-
ուէր Պուլխարիէնի մը կողմէ:

աստիանները. տեսա՞ք ասոցչին
սրբազորութեան եղանակը. եթէ
ասոնց ամէնը գիտէք լաւ. իսկ ե-
թէ ոչ՝ թողե՛ք որ ըս՛մ ահա՜ս.
Աշակերտը «գնա»ին տեղ «եկու»
«բերաւ»ին տեղ «տարաւ», «չտալ»
ին տեղ «չաքար» բառերը կը գոր-
ծածէր. թողունք քերականական
կանոններու եւ բարբառ գործա-
ծութեան մէջ եղած սխալները:
Գալով ուսուցչին երբ կը ճգնէր
ու չէր կրնար հասկնել կամ հա-
կնալ, իր շուրջը գտնուողներէն
բացատրութիւն կը խնդրէր. բայց
դժբախտաբար վերջիններն ալ
Պուլխարիէն անտեղեակ ըլլալ
լով չէին կարող իրեն օգնել ու
այսպէսով սեւեռներս ճիշտակը դուրս
կանցնէր կերթար. աշակերտին
սխալը միշտ սխալ մնալէ չէր դադ-
րեր:

Հայեր, մանաւանդ տեղացի
հայեր, երբ համոզուած էք որ
իբր տեղական լեզու ձեր զաւակը
ամենէն աւելի պէտք ունի պուլ-
խարիէն լեզուն. այպէ՛ս ուրեմն
անիկայ պիտի սովորի. այսպէս
խախտու հիման վրայ հիմնուելով
է որ անիկայ կարող պիտի ըլլայ
պատրաստուիլ տեղային ժիմնադ-
ներու համար:

Մի՞ջք, հաղար մեղք մեր է՞ն
փափուկ ու մատաղ ուղեղի տէր
եղող զաւակներուն, որք երկու
բառ պուլխարիէն սովորելու հա-
մար այսպէս կը տանջուին ու կը
կենան, որք բառի մը նշանակու-
թիւնը հասկնալու համար ուսուց-
չին չըթուէքէն կախուած, ժամե-
րով մտածելու դատապարտուած
են:

Արդեօք աշակերտին լեզուէն
հասկցող դատաւորներ կը պահե-
նէին:

Երկրորդ, թերութիւն մ'ալ կար
մեր վարժարաններէն մէկին կամ
երկուքին մէջ: Սա է թէ՝ աշա-
կերտին տրուած աշխատութիւնը
իւր տարիքին ու մտաւորական կա-
րողութեան համապատասխան չը-
լալով, քիչ մը աւելի բարձր էր:

Այս՝ 10-12 տարեկան աշակեր-
տին կարողութիւնէն վեր է իսկ մը
«թիւն»ներէն վերջը ելնել չորս
հինգ լեզու սովորիլ, ինչպէս, հա-

յերէն, Պուլխարիէն, Զրանսե-
րէն, Սիւրիէն, Եւ կամ ասոնց
միոյն տեղ երբեմն ալ Գերմանե-
րէն: Ասկա չառ է, ծանր է ա-
շակերտին. պէտք է թեթեւցնել
զայն եւ կամ մէկ քանի տարիներ
վերջին ձգել. այսինքն 17-18 տա-
րեկանէն վեր ելող աշակերտնե-
րու:

Ահա ինչ որ կրցի նշմարել մեր
վարժարանի վարժարաններուն մէջ,
որոնց ուղղութիւնը կը յուսացուի
մեծ օգուտներ կրնայ ընծայել մեր
պապայ սերունդին:

ՇԱՊՈՒՇ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՀՈՒԱՆՏԱՅԻ ՄԷՋ

Ամսթերտաթի միթիւնկին մէջ Տ. Չե-
րազի ատենախօսութեան յետոյ Տօք.
Քիւրթէր հետեւեալը տրտասանեց.

Բոլոր ներկաներու միաձայն հա-
ւանութեամբ, մեր ջիւրի եւ ան-
կեղծ շնորհակալութիւնները կը
յայտնւի ձեզի, Տիար Զորազ,
այնքան պերճախօս եւ սրտայայտ
ճառին համար որուն ունկնդրե-
ցինք: Զեր գանգատին եւ ձեր լե-
զուն չափաւորութիւնը մեզի բա-
քանջացուց: Տեղ տեղ տեսնեք որ
ձեր գահճներուն գէժ բարկու-
թիւնը կաթիլ հանեց աչքերէն եւ
թրթուացուց ձեր ձայնը, բայց
վրէժխնդրութեան բոցը չի ցա-
տեց: Դուք ձեր զգացումները
զսպեցիք մինչեւ վերջը, եւ խօսե-
ցաք իբրեւ բարի քրիստոնեայ,
գիտնալով որ վրէժխնդրութիւնը
վերապահուած կը մնայ Անոր որ
օր մը բոլոր կայէնները ստօթա-
հար պիտի ընէ անոնց պոչելով,
Եղբորդ արեւան ձայնը կայ որ երկ-
րէն ինձի կաշտակէ:

Բարեկրօնի աւերակներուն տակ,
կըսէ Ստուտաժաշունչը, պիտի գըտ-
նուի ամեն անոնց արիւնքորոնք կը
տորոնեցան: Եւ Յովհաննու Յայր-
նութեան մէջ, նահատակները գա-
հին տակէն կ'աղաղակեն բարձրա-
ձայն. «Տէր, մինչեւ երբ չես առ-
նիր մեր նարեան վրէժը անոնցմէ
որոնք զայն թափեցին»: Այննա-
հատակներուն մէջ դուք ալ հոն,

վերը ձեր Հայաստանի նահատակ
ները ունիք, որոնք անցեալին նա-
հատակներուն հետ կ'աղաղակեն:
Աստուծայ կը մնայ ուրեմն վը-
րէժխնդրութիւնը, իսկ մեզի ա-
ղօթքը, նոյն իսկ մեր դահճնե-
րուն համար. միայն ձեր պարա-
գային մէջ, չենք կրնար աւելցնել.
անոնք չէին գիտեր թէ ինչ կրնէն.
Գոնէ վարիչները գիտէին ա-
պահովապէս թէ ի՞նչ կրնէն, եւ
ամեն ինչ ըրին կանխամտածու-
թեամբ:

Թո՛ղ ձեր ժողովուրդը չի կոր-
սնցնէ ուրեմն ոչ իր համբերու-
թիւնը, ոչ իր քաջութիւնը: Յոյ-
ները, Մօնթէնէկիօցիները, Սեր-
պերը եւ Պուլխարիէնը հետզհետէ
ազատեցան. կիրիտ անոնց պիտի
հետեւի ընդհուպ:

Ձեզի համար ալ փրկութեան
ժամը պիտի հնչէ, եթէ նոյն իսկ
ձեր աչքերը փակուին զայն տես-
նելէ առաջ: Եւ եթէ առ այժմ
ձեր ժողովուրդը կը փափագի իր
միթիւնարութիւնը փնտռել ուրիշ
աղբերու կարեկից համակրութեան
մէջ, ձեր թերթերով ապահովե-
ցէք ձեր եղբայրները թէ իրենց
հետ է բոլոր Հոլանտական ժողո-
վուրդին սիրտը:

Զօրայական կաւքաւաւանեալ
մը, մենք ամենքս կամբարտա-
նենք այն բարբարոսները որոնք
երկիրը սուղեցին ձեր արիւնքով:
Կամբաստանեմք այն պատասխա-
նատու մարդիկը որոնք կը շարու-
նակին իրենց ծունդերով չօքել
ձեր կուրճէին վրայ: Կամբաստա-
նենք այն անսիրտ եւ անկարգուն
դիւանդափութիւնը որ ձեզի զո-
հեց իր յաւիտենական նախանձու-
թեան:

Քրիստոնեայ կամ մարդասէր,
արեւմտեան ամբողջ ժողովուրդ
մը ձեզի կը լսնաւարէ զրկել
արեւելեան այն ժողովուրդին զոր
այնքան արժանաւոր եւ արի կեր-
պով կը ներկայացնէք, իր սքան-
չացման արտայայտութիւնը, իր
պատկաւանքը ձեր վիշտերուն հա-
մար եւ իր աղօթքը ձեր տպագայ
փրկութեան համար:

Դուք կոչու՞մ ըրիք մեր ժողո-
վուրդին: Զեր կոչումը չեղտակի

կը թափանցէ մեր սիրտին մէջ : Մեր թագուհին գովեստը ըրիք : Ո՛հ, կը հասկնամ . մերինին պէս թագուհի մը վեհապետուհի ունի . նալ՝ ձիւղի համար պիտի նշանուէր գծուքէն արքայութիւն փոխադրուի :

Իցի՛ւ թէ ընդ հուշ ծագէր այդ օրը . Աստուած տայ զայն ձեզի : Եւ մինչեւ այդ օրը . որուն այնքան խանգով կը բաղձանք , վատահ եղէք որ ձեր հայրենակիցները եղած են , եւ և պիտի ըլլան միշտ մեր լաւագոյն իղձերուն և մեր լաւագոյն հոգիներուն առարկան :

Տխրա ջերազ , մեր խորին յարգանքը ձեր նահատակներուն յիշատակին . մեր յարգալիր ողջոյններուն հարկը ձեր թշնամանում ժողովուրդին :

Եւ կը վերջացնեմ գոչելով . կեցցէ՛ հայաստան :

ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

Հետեւեալ նամակը անփոփոխ կը հրատարակենք :

Խիզակն Հաւին գիշերն 3 յունիս 99 Սիւրբի եղբայր :

Ստացայ նամակդ և խրկած տաս արծաթը . բայց երանի չի խրկէիր , որովհետեւ քաղաքէն բերելուն պէս ձեռքերնիս չի ձգեցին . արդէն քսան օրէն աւելի է որ հարկահաւաքիչներ գիւղն եւ կած են վեց տարուան տուրք կը պահանջեն . արդէն չունինք ու եւ բան մը որ ծախենք տանք տուրքի տեղ . մենք ունէինք արդէն մէկ հատ կով , եկան ան ալ քոչեցին տարին երեք արծաթի տեղ . չի մոռնամ ըսելու որ Շարապէկի տղայոց ձեռք բնու չենք կրնար քաշել , ամեն օր 10-12 մարդով կուգայ գիւղը և չարիք չի մնար որ չի հասցնէ գիւղացւոց , եթէ միջոց ըլլար վաղուց ձգած փախած էինք , սակայն վրանիս չորս գին արգիւտած է ուրիշ տեղ մը երթալու . (Պօղոսի Ասպատուրն ալ վախէն երեք օրէն վերջ մնուա) :

ԲՈՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (25)

ԺԱՄԱՆԱԿԱԿՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԱԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Վահրամ երբ Մարտիկ աղային ներկայացաւ ո՛չ ասիկայ Վահրամ ճանչցաւ ոչ ալ Վահրամը Մարտիկ աղան : Հայ երիտասարդին կողմէ տրուած հակիրճ բացատրութենէ մը ետք երկու ազգականները զիրար գրկեցին : Մարտիկ աղա առաջին ուրախութեան տը պաւորութենէն ետք Վահրամին այսպէս յանկարծակի Պոլիս գալուն պատճառը հարցուց : Վահրամ գործին էութիւնը անոր բացատրեց .

«Սո՛ր , էութիւնը ցարդ անստոյգ դաւաճանի մը լարած ծուղակը Յովհաննէս աղայի տունը մարեց եւ պիտի պարտաւորեցուց որ հեռանամ հայրենիքէն եւ պանդխտութեան դառն աղը

Նաեւ եղբայր կարծեմ լսած ես թէ մայիս 14ին եկան բոլոր գիւղը տուին կրակի , գիւղին մէջ ողջ տուն որ մնացեր է մինակ Սարգսի Նազարի տունն է , չէնէ բոլոր գիւղն հոյ ճարակ եղած է , բոլոր գիւղացիք եղած ենք անբոյն թռչունի պէս ոչ ուտելիք ունինք ոչ հագնելիք , մեր բոլոր օրեր խոտիւրտ վրայ անցուցած ենք . տակաւին չենք գիտեր մեր վիճակը ո՛ւր պիտի յանգի . եթէ չոր մը տաքցնելու հարկ ըլլայ բոլոր գիւղացիքս Նազարի տուն կերթանք ջուր տաքցնելու . ամբողջ գիւղացիքս եթէ թունիրէ մէջ ինչալու ըլլանք ոչ բնու մէկէն չորխահոտ (*) չենար . ցանքերն ալ մեր մեղաց այս տարի երես չի տուին (**) : Բոլոր մեր խիզանայ կողմելու վիճակը անտառնելի է սղուծիւն , անօթութիւն , հարստահարութիւն : Հսկայնք որ քաղաք նպաստ կը բաշխեն . չի կարողացանք քաղաք երթալ գոնէ կօտ մը հաց բերէինք , հացի համ առնէինք :

Սուրբ Գամաղիէլու վանք արդէն չէիս ձէլլատոյ տղան ըլլած է իրեն սեփականութիւն , դպրոց և ալ տեղեր ախոռ ըրած է , արդեօք ասկէ աւելի բան պիտի տեսնանք

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Պոռկազ , 3 յունիս 99

Ձեր պատուական թերթի յունիս 26ի թուոյն մէջ հրատարակած էիք Հեթում ստորագրութեամբ տեղէն գրուած թղթակցութիւն մը , որով բացատրուած էր Պուրկազի թաղ . խորհրդոյ նոր և օրինաւոր ընտրութիւնն :

Այդ եօթը ընտրեալներէն մէկն էր Գալուստ Ունճեան , որ քանի տարիներէ ի վեր իր խռովարար ընթացքով ամենի ծանօթ է , իսկ

(*) այրած պղնձի հոտ

(**) հոռիքներն ալ աղէկ չեն

ճաշակեմ , նչ որ ալ ըլլայ հաճիրեւ պիտի գիտնամ օր մը վերջապէս իւրն ծաղ պիտի նետուիմ հո՛ն միայն , հո՛ն առնելու յաւիտեակ ն հանգիստս :

Մարտիկ աղա զգացած վիշտէն տըժգունեցաւ միայն :

«Մոռնանք հիմայ այս ամիսը , չալունակեց Վահրամ հետս մէկ քանի ամիս ապրելու ստակ ունիմ . այսուհանդերձ կանոնաւոր աշխատելու վարժուած հաւատացէք որ րոպէ մը պարապ անցնելու փափաք չունիմ . եթէ կարելի ըլլայ վաղը իսկ գործի մը կը սկսէի :

—Դործի համար հոգի մի ընեք զաւակս , պատասխանեց Մարտիկ աղա . քեզի համար գործ պատրաստ է . քովս կը կենամ որչափ առնն որ կուգաս . ներկայութիւնդ ինծի համարձակութիւն պիտի տայ որ փտահոբար տոնաւորական գործս աւելի ընդարձակիր :

—Ձէ՛ , հօրեղբայր , չէ . նպատակս

միւսները պատուաւոր և համեստ անձնաւորութիւններ են , որոնք բնականաբար Ունճեանի ենթոթիւններուն գործիք ըլլալ չպիտի ուզեն . ահա այս պատճառաւ աւանցմէ երկուքը իրենց հրաժարականը զրկեցին Ընտրող Ժողովոյ նախագահին . Ունճեանն ալ նոյնը ըրաւ :

Բայց յետոյ ժողովագեան թախանձանքէն մղուած առաջինները հրաժարականին հաւաքին , ուր ընդ ընկերներուն հետ , բացի Ունճեանէ՝ որ հրաժարած էր , պաշտօնին ստանձնելու համար հաւաքուեցան խորհրդարան ըստ հրաւերի ընտրողական ժողովոյ . Այդ նորընտիր թաղականք ուզեցին նախ պաշտօնական կէիքը , որ Ունճեանի քով կը մնար , իբր ատենապետ նախկին թաղ . խորհրդոյ : Այս խռովարար պարունը թէ ժողովուրդի միահամուռ ձայնով և թէ Ընտրող Ժողովոյն ու քահանային պաշտօնական գրութիւններով եղած գիմուսները առ ոչինչ համարելով յամառեցաւ մինչեւ վերջ և կնիքն ու հաշիւները չի յանձնեց :

Ընտրողական ժողովը տեսնելով որ ինքը չէ կարող այդ անիրաւութեան դէմ բան մը ընել , հասարակութիւնը հրաւիրեց և խառն ժողով մը գումարելով որոշուեցաւ նամակ մը գրել Ունճեանին և պահանջել որ նամակը առած պահուն անմիջապէս պաշտօնական կընիքը յանձնէ , հակառակ պարագային ծագելիք խռովութեանց պատասխանատուն ինք է :

Ունճեան այդ նամակը առնելով տեղույս վարժարանի ուսուցիչ ու իր շահատակութիւններովը հանրածանօթ Արմէն Շիտանի սփակցութեանը կը դիմէ . այս վերջինը արդէն նկատած ըլլալով թէ նորընտիր թաղ . խորհուրդը իր դարձած քննարկող գործիք չի պիտի ըլլայ , ամենայն սիրով կ'աջակցի Ունճեանի : Այս երկուսը միատեղ քանի մը միամիտներ իրենց զլուխ հաւաքած կ'որոշեն ամեն ճիգ

այդ եւս առեւտրական ապարդիւ մէջ մնալ չէ . ես Պոլիսի մէջ գործելու ծրարագիրս պատրաստած եմ . ան ալ հոս ուսուցչութեամբ զբաղուելէ կը բաղկանայ , վաղը ձեզի հետ Պատրիարքարան կերթանք Ուսումնական խորհրդին ներկայանալով վկայագիր մը ստանալու համար . անկէց ետքը ապահով եմ որ գործ չպակտիր ինծի :

—Ձաւակ վարժապետութեան , վիճակը քեզի ինձմէ աւելի ծանօթ է , ես կեցիր առ նպատակեց :

—Անկարելի է հօրեղբայր , որչափ անառնց յախուռն ըլլալու անպատեղի է :

—«Դու զիտես»ը եղաւ Մարտիկ աղայի պատասխանը , որ իրիւ մտացի մարդ մը զգաց որ Վահրամը այդ տեսակ որոշումի մէջ գրգռող ներքին խորհրդաւոր պատճառ մը անպատճառ կենալու էր :

Մարտիկ աղա Պոլիս ամուսնացած էր եւ կը բնակէր Բերա Ըթըռ փողո-

թափել ու անագնիւ միջոցներով տապալել նորընտիր թաղ . խորհուրդը : Ուստի առանց քուէարկութեան հետեւեալ անձերը իրենք իրենք թաղական կանուանին . Գալուստ Ունճեան , Տէմիրճի Մա. նուկ Սարգիսեան , Տէմիրճի Գրի. գոր խաչատուրեան , Կոչկամար Մկրտիչ Գալֆահեան և Մանուկ Համաձեան : Ահա ասոնք քահանային կ'իմացունեն թէ ընտրողական ժողովը ու ընտրուածները լուծեալ կը համարեն և եթէ իրենց այս որոշման դէմ հակառակողներ ըլլան՝ անմիջապէս եկեղեցին ու դպրոցն կառավարութեան պիտի յանձնենք : Բաց աստի կը սպառնան մէկ քանիներ արտաքսել տալ երկրէն :

Ահա այս է Պուրկազի ներկա ազգային վիճակը և Ունճեանի ու Շիտանի վերջին սխալագործութեանց համառօտ տեղեկագիրը . այս երկու հերոսներն ալ եկեղեցին ու վարժարանը իրենց օգուտին համար գոծածելու միակ նպատակաւ է որ կը գործեն ի վնաս ապագայ սերունդին :

Գ.

ԱՌՈՂՋԱՐԱՆԱԿԱՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

Սրախն եւ իգական սեռն ամուսնի վիճակին մէջ :

ԱՄՈՒՐԻ ՎԵՃԱԿԱՆ ՄԷՋ ԱՌԱՎԱՆ ՍԵՌՆ . Ամուսնի երիտասարդն առեւտրական ապարդիւ մէջ քիչ ու շատ յոգնած երբ երեկոյն առն կը վերադառնայ քիչ մը հանգիստի պէտք ունի , ուստի ըստ պրկում է երթալ իր ապրած միջավայրին մէջ գտնուած զրօսանքներէն մին . տնոյ բնականաբար կը գտնէ իր հաւատարիմ ընկերը , ոչ հաւատարիմը , մտերիմը կամ ծանօթը , որով կը սկսի ժամանցը . կուգան պարագաներ որ կերակրոյ որոշեալ ժամանակը ժամերով կանցնի , պատահարներ որ դիւերն ի բուն անբուն անցնելու կը տարապի : Կը ներկայանայ ոգիւնը ըմպելին որ թէեւ առաջին օրերուն կը մերժուի , սակայն հետզհետէ անկարելի կը դառնայ անկէ փախուստ տալն :

Կը : Վահրամ իր հօրեղբոր ամուսնոյն տիկին Բերկուհիին մէջ պաւտ տիկին Վերկինէի համանման մէկ պատկերը որ իրեն համար մեծ մխիթարութիւն մը եղաւ . իրեն սեռեակ մը յատկացուեցաւ տանը մէջ :

Երկրորդ տաւ օտուս երկուքը մէկանց գացին Պատրիարքարան ուրկէ տեղեկացան որ առաջիկայ չորեքշաբթի Ուսումնական խորհուրդը կալաթայի խորհրդարան : պիտի գումարուէր . որչեալ օրը հոն երթալով խորհուրդին մէկ քանի մասնաւոր անդամներն անկողնայ թեանը քննութիւնն անցուց հայ . օտ . Ֆրանս լեզուներու թեան վրայ . քննիչները գոհ մնացին իրմէ եւ երկրորդական ուսուցչի վկայական տուին անոր :

Ո՛րչեղ երիտասարդ անպատում ու խախտութեամբ գորս եկաւ . խորհրդարանէն եւ ուղակի դնաց նորատունկեան խան Արեւիկի խմբագրաւորն

Այսուհետև ընկերական շրջանակի մէջ շատ անգամ Երիտասարդն դատաւարութեամբ է, բարոյական եւ ֆիզիքական անկման պատճառ եղող չարազանցութեանց գիմնելու, այսպէսով յաճախ տարբեր տարբեր ծննդամիջական աւելի ախտերու ալ կ'ենթարկուի:

Մեծ բարեբաղդութիւն կրնայ համարուիլ եթէ լոկ միմիայն մարմնայ տկարացումով իր ընթացքին պատիժը կրէ, այս անկանոն կեանքի հետեւանքը ներքին գործարանական հիւանդութիւններ անպակաս են, բացառութիւն են այն երիտասարդներն որոնք բազմապէս ընտանեկան յարկի ներքին ըլլալով ստիպուած են ժամանակին իրենց տունն վերադառնալ, սակայն կրկին աշխատանքին ալ առաւել կամ նուազ բռնադատուած են զոյգ կեանքին համակերպելու:

ԻԿԱՅԱՆ ՍԵՌԻՆ ԱՍՈՒՐԻ ՎԻՃԱԿԻՆ ՄԷՋ. — Չափահասութեան տարիքին մէջ մտնող աղջիկ մը տակաւ կը սկսի խորիլ իր ապագային վրայ. եթէ քիչ մը դատարարական է եւ իր տրամադրութեան տակ վէպերու հատորներ կը գտնուին, հետզհետէ անոնք թղթաշերտով աւելի շուտ վերադառնալ գաղափարներով կը սնանի միտքն եւ կը սկսի սպանիական գրեականներ յորինել, կամայ կամայ արդուարդի հոգն երեւան կուգայ եւ ինքզինքն հաւնեցնելու տենչն ծնունդ կառնէ իր մէջ, իրենց ընտանեկան շրջանակի ներքին չափով երկնայթիւն եւ հրաւիրներ կը պատրաստուին, որոնց կը յաջորդէ հոգեկան տաքնապէս:

Ընդհանրապէս ասոնց կը յաջորդէ սովորական աղջիկտեսեր եւ շատ անգամներ շարունակական մերժումներն, որոնց հակազդեցութենէն կուգան իշխան գրութեան խանգարումներն:

Եթէ մայրն խոհեմութեամբ ամեն բան կանխատեսած եւ լաւ խրատներով օժտած եւ ի պահանջել հարկին աղջկանը անգիտակցութեամբ գործած է, յայնժամ հակազդեցութիւնը շատ ծանր չը լինելով առողջութիւնը չը վտանգուի:

Իժարախտաբար ասոր հակառակն ալ կան ոգէտ մայրեր որ կատարուած իրողութեան մը նման շատ կանուխէն կուգեն պատրաստել եւ հակառակ պարագային, մայրը իբր թէ զինքը արդարացնելու եւ աղջիկն չը նուաստացնելու համար հակառակ կողմին ինչ ինչ թերութիւններ գտնելով կը պարտաւէ, աղջկանը տառապանքը քիչ մը մեղմացնելու յոյսով, որ դառնացնելէ ի դատ ոչ մէկ բանի կը ծառայէ:

Երեւակայեցէք խեղճ աղջկան կրած.

բարոյական անկման առջեւ հոգեկան ծանր տաքնապէս, այսպէս մի քանի անգամներ կրկնուելով, այլ եւս աղջիկը կը լինի յոռետես, վարանոտ, եւ ջղային, եւ ինքն իրեն շատ անգամներ պատճառներն գտնել կը ջանայ իր ծրնողքին նիւթականին, ընկերական շրջանակին եւ միջավայրին անբաւականութեան եւ անյարմարութեան մէջ:

Ասոնք ամենը տեղի կունենան առանց մէկը իմանալու. միայն սիրտն է որ կը զգայ եւ հոգին է որ կը տառապի եւ տակաւ առ տակաւ մարմինն է որ կը տուժէ:

Իգական սեռն աւելի ջղային եւ բազմապատկար նուազ զբաղեալ եւ ոչ ազատ լինելուն աւելի շատ ժամանակ կը մնայ իրեն միշտ խորհելու, եւ հետեւաբար աւելի ջղային սպառում յառաջ բերելու, որով այսպիսիներն առ հասարակ ջղային տկարութեան ենթարկուած են, եւ եթէ երբեք 30 տարեքը անցնելով չկարողանան իրենց իտէալն իրագործել, յայնժամ պարտաւորեալ են որ եւ է նոր զբաղմամբ (ուսման, ձեռագործի, արուեստի եւն.) պարագելով զիրենք մոռացութեան ենթարկել, ապա թէ ոչ մեծաւ մասամբ ներքին գործարանական հիւանդութեանց կենթարկուին:

Ինչպէս յայտնի է, պատճառներն մեծաւ մասամբ ընտանեկան կրթութեան եւ մասնաւորաբար մայրերու դատարարականութեան պակասութիւններն են, որով պարտաւորեալ է աղջիկն չարաչար կերպով տուժելու:

Բժ. Ե. Թ.

(Շարունակելի)

ԼՐԱՔԱՂ

Անցեալ շաբթու խիզանու չաւին գիւղէն Պոլիս նամակներ հասած ըլլալով գիւղացւոց ա. մենաշքաւոր վիճակը կը նկարագրէին. այդ նամակները ստացող աղջայինք Պատրիարքարան գիւմած ու խնդրած են նիւթական օգնութիւն հասցնել. Պատրիարքարանը խոստացած է իր կողմէ օգնութիւն մը ընել, պայմանաւ որ իրեն. Գիւմադ այդ ան ձեռն ալ իրենց մէջ հանգանակութեան մը ձեռնարկեն. խեղճ պանդուղտ գիւղացիք անմիջապէս կը սկսին հանգանակութեան. բայց

հանգիստ զգացած էր ան գիւղերը, սակայն իր վայելած անդուր քուռը փոխանակ զինքը կազդուրելու հոգեպէս տկարացուցած էր:

Թրքական ժամը 4ին բարապան մը գալով իր անունով կոչեց զինքը եւ նախաքննիչ դատաւորին առջեւ տաքաւ զայն. նախաքննիչ դատաւորը ճառատունը չիմպի մօտ, կարճահասակ, նիւթայ կազմով, անհասարակ ունեւորով, կնճռոտ եւ սեւի մօտ թխաքէմ, չիւնայուածքով պաշտօնեայ մ'էր. պատկերը ամբողջացնելու համար սա ալ ըսենք որ պիտիլը ցանցաւ էին իսկ մօրուքը միայն թուշը կը շրջապատէր, այսպէս ծնօտին մնացած երկու կողմերը այրած միսի մերկութեամբ կը փայլէին:

Ամբաստանեալին վրայ այս անշնորհ մարդուկը աւելորդ է ըսիլ շատ վատ ազդեցութիւն ունեցաւ. նախաքննիչ դատաւորը ճգած ձայնով առաջ եկուր այս ինչը դո՞ւն ես» դատականա

յանկարծ աստիկանութիւնը զիրենք կը ձերբակալէ ու բանտ կը առաջնորդէ: Բարեբաղդաբար քիչ վերջը Պատրիարքարանը եղելութիւնը իմանալով իր գործակատարին ու Պատրիք Էֆէնտիի միջոցաւ բնտարկեալները կ'ազատէ:

— Տիար Արշակ Զօպունեան Բարիդի «Լառուս» համայնագիտական հանդէսին մէջ երկայն յօդուած մը գրած է արդի հայ գրականութեան մասին ակնդի տեղեկութիւններ պարունակող. Այդ յօդուածով թուած է ներկայ դարաւ հայ գրագէտները, մի առ մի անոնց մշակած ճիւղերը եւ գրական գործունէութիւնները յիշելով. Միսիթարան, Ռուսահայ եւ Տաճկահայ շատ ծանօթ գրագէտներու լուսանկարներն ալ այդ յօդուածի միւսեային սիւնաձևերուն մէջ արտասպառած են:

«Քիւզտիքիս», «Թէրճիման Հագիրգալ» անուն թուրք թերթէն առնելով կը գրէ թէ Տիգրանակերտի նահանգին մէջ ասպատակող առաքակապետ (.) խաչօ այս անգամ Սիլվան դաւառի մէջ ձերբակալուած է:

— Տաճկաստանէն եւ ուրիշ տեղերէ, ուսման համար ժընէվ գացող Հայ օրիորդներ սկսած են յաշնդ քննութիւններ տալ եւ Հայ իգական սեռի անունը բարձրացնել օտար երկրի մէջ, կը փափաքէինք Պուլկարահայ օրիորդներն ալ տեսնել անոնց օրինակին հետեւող:

— Ուրֆուի մէջ շատ բնտանիքներ մի քանի օր առանց հացի կը անցնէր եղբի:

— Տաճիկ կառավարութիւնը բարհաճած է վիճանձնաբար (.) շրնորհել Մուշի Ս. Կարապետի եւ Արմաշի վանքերուն յետեւալ տուրքերը:

Բնական է որ մեծ շնորհ մ'է այս եղածը եւ ամբողջ աղջիկն եւ յիշատակութեանը արժանի. Օրմանեան Էֆէնտին իրաւունք ունի հպարտանալու, թերեւս իր գործ

ծունէութեան արդիւնքն է ասիկա, բայց արդեօք միեւնոյն ժամանակ քանի՞ վանքեր աւարի տրուեցան ու քարուքանդ եղան, եւ ո՞րչափ գիւղեր աւերակ դարձան. որոց մասին բաւ մը իսկ արտասանել արգիլեալ է շնորհիւ դարձեալ նոյն վիճանէն (.) կառավարութեան:

— Իզմիրի մէջ պատրաստու թիւն կը տեսնուի արժանապէս տօնելու ծանօթ հրապարակագիր Տ. Սատթէոս Սամուրեանի պրական եւ կրթական գործունէութեան իսնամակը:

Վերջապէս միսիթարութիւն մըն է Հայ գրագէտի մը նկատմամբ եղած այս համակրական շարժումը որ բնաւ չէինք սպասել գէթ այս միջոցներուն:

— Սըվազի տաճիկներու կատաղութիւնը անցած է նոյն քաղաքի շուկանուն ալ որոնք իրենց կարգին սկսած են մարդիկ խածնել:

Աստուած հոմբերութիւն տայ հոն ապրողներուն:

— Պատրիարքարանի նպաստաւ մատուց Յանձնաժողովը իր վերջին նիստին մէջ որոշած է 100 ոսկի զրկել խիզան, 50 ոսկի Բաղէշ, 50 ոսկի Եղեւսիա եւ 50 ոսկի Միւլիսինէ (Մալաթիա) զրկել:

Ինչ կարժեն 50 ոսկիներ այն անհուն կարօտութեանց առջեւ, որոնք կըսպառնան ամեն մի հայի տուն ցորչափ կը տիրեն արդի պայմանները:

— Տփղիսէն կը գրեն թէ Տ. Սիւրբի Աֆանասեան իր երկարականի տունը նուիրած է Քաղաքային հիւանդանոցի համար, Տանը ներկայ արժէքն է 30 հազար լուրի. ատկէ զատ Տ. Աֆանասեան կը նուիրէ ութ հազար լուր. լի տունը նորոգելու եւ հիւանդանոցի պիտոյքներ զնելու համար, եւ 20 հազար լուրի, որ անձեռն միւսելի պիտի մնայ դրամատան մը մէջ եւ ասոր տոկոսով աղքատ հիւանդներ պիտի դարմանուին:

«ԻՐԱՒՈՒՆՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ
Տ. Ս. Լ. Զուլաւա. — Զրկած 5 ֆըրանգ ստացանք:
Տ. Ս. Մ. Զակօրա. — Տարեկան բաժնեգիրք ստացանք:
Տ. Մ. Թ. Ռուսուկ. — Շնորհակալութիւն. ստացանք:

ուր աղջ մը տուաւ. բայց պաշտօնի մը համար իր ունեցած մասնագիտութիւններով ինքզինքը ներկայացնելով. չաքաթ մը ետքը երեք նամակներ ստացաւ խմբագրատունէն, որոնցմէ տեղեկացաւ որ Պ. . . Ս. . . Օ. . . արւարձաններու ազգային վարժարաններու թաղական խորհուրդները զինքը կը հրաւիրէին բանակցութեան. ամենուն ալ պնաց. երեք վարժարաններու մէջ այցելու դատաստութիւնն ու պիտի ընէր քաւակարն լեցուն ամուսնանով. հարկ է ըսել որ այս առաջին արտասովոր աշխուրթիւնը իր նախընտրած ասպարէզին մէջ Վաթիւսի համար մեծ սփոփանք եղաւ. հազիւ երկու շաբաթ անցած Պոլիս հասնելէն ետք սկսաւ իր դատախազութիւնները իր հրաւիրուած երեք վարժարաններուն մէջ:

Ժ.

Յովհաննէս աղա Մէգիրէի բանալ հասնելուն երկրորդ առաւօտը կանուխ արթնցաւ ըստ իր սովորութեան. շատ

ցած հարցումներէն ետք սկսաւ իր թէ վարպետորդի դարձուածներով բանտարկեալին բերանէն Ակնի մէջ տուած ծինէն տարբեր խոստովանութիւններ խել աշխատելու. Յովհաննէս աղա տեղեկակ ապկար պաշտօնէին ճարպիկ միտքին ուշադրութիւն դարձուց իր ստած պատասխաններուն վրայ եւ երբ առաջին նախաքննական հարցաքննութիւնը աւարտեցաւ իր տուած պատասխանները կրկին անգամ կարգացնել տալով քանի մը նկատելի եւ ջոր վերջնող սխալները ճշդել տուաւ. Աւելորդ է ըսել որ ամբաստանեալը միօրինակ եղանակով իրեն վերադրուած յանցանքը հերքեց. Առաջին հարցաքննութեանէն ետք նախաքննիչ դատաւորը հրամայեց որ արգելաբան զնեն, Յովհաննէս աղան, որ մի տեսակ զբոնք է, աղջամուղջի տիրապետութեանէն յափշտակուած յաւիտեական սեւ պատառ մը ուր կը փակեն, փակեցին եւ պիտի փակեն ասկէ ետքն ալ մա-

նաւանդ քաղաքական ամբաստանութեան ասկէ գտնուած քրիստոնեաները, անոնց քստմեցողիչ տանջանքները նեատելու եւ զիւային հաճօք զգտու համար:

Մէգիրէի մէջ արգելաբանը մասնաւոր բացանաւ մ'է կարգ մը յարակից խցիկներէ բաղկացած մէկ ու կէս մէթր լայնութեան եւ նոյնչափ խորութեան վրայ. պատուհան եւն. չկայ, դուռին վրայ գտնուած չեղ ծակաթքնեքէ օդը ներս կը մղուի այլ ոչ օրուան լոյսը. զինուոր կը սպասէ իւրաքանչիւր խցիկի ստիւեւ փախուստը արգիլելու համար:

Շ. Կամաւարական
(Շարունակելի)

—)o(—

ՄԻԻԹԵՆԷՎ ՎԻՅԷ

ՆԻՋՆՆԻԵՍԻ ՎԻՐ ՍԱՆԹ ՔԱՏՈՒՐ
 ՄԻՎԻՆ ՈՒ ՃԷՎԱԿՈՒՄՆ ՍՈՆՐԱ ՎԻՆ
 ԹԱՆԹԻՔ Մ. ԱՆՈՆԵՂԻՆԻ Ը ՍԵՐ
 ՎԷՍԹ ՎԵՐՐԱՊԻՐԻ ԴՐՐ :

— Թիւրքիանըն Տիյունը ուսմու
միյէ իտարէսինէ Շտրգ Բումէլի

Աւստրիա մօրախաւարընտան մա-
տէ տիկէր ումում մօրախաւար
«տում տում»լարըն իսթիմայըն
գարըը բրօթէսթ իթտիւէր. ֆա-
գաթ շիմտիլիք պու պուպտէ դօն.
ֆէրանքըն գալարը պիլիէմէյօր
Քէգա ինկիլիւէր տէյօրար քի
«տում տում»լարը պէյազ վէ մէ-
տէնի միլլէթլէրէ գարըը իսթիմայ
իթմէյուպ. վահշի վէ ոփյահ գա-
պիլէրէ գարըը գուլտնաճագար
Հէր հալտէ պու տէրէճէ տէհ.
չէթլի վէ ոճ տէրէճէ մազար-
րաթլը ուլէթլէր գուլտնաճագ մէ-
տէնիթլէթլ պիր միլլէթլ Եագըը.
մագ օլաըզընը ճէրիտէլէր իտտա
իտէյօրար :

[illegible]

Կ՝ ՓՆՏՈՒԻԻՆ

Բնիկ Ակնեցի Պաղտասար էյ
կիճհանի Ճ'անիկ և Աբրահամ զա
ւաներ' որ երկար տարիներէ ի վե
հգրպտոս կը բնակէին , կ'փնտ
ռուին իրենց ազգականներուն կող
մէ , ուստի անոնց հասցէն գիտցո
ւազարինք թոյ հաճին երկտոյո
ւր խմբագրութեաւ իմացնել :

ԶԱՄԻՐԻ ԲԻԱՑԱՍՐ

Հանձն, Յուշիս 3

Պոլսայ
Վահ. լիպրա 55-58 հ.ք 9-75. 1-50ք
Արապա, 55-60 հ.ք/թ. 10-11:

Արքա
Լիպրա 42-50 հեքթ. 5-80.6-40 ֆր
Մըսր
վական 55-57 լիպրա. 4.10-6.20:
Կիւնտ 8-10 արապա վէ 10-1
վական պուղապ վէ միսիր՝ 5-6 արապ
արա կէլմէքտ տիր
Արապա մուամէլէսի նարուլէտն 21 ֆր
հիսապը իլէ:

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войниковъ